


րից ցուցակը: Գասառան մէջ քո հանած ձայնդ, գծած գիծդ, գրած բառդ, տուրդ և դասդ եթէ անհամապատասխան և վատ են, քեզ կը հալածեն դպրոցումն և կեանքի մէջ հասարակութիւնը: Երբեք ունէր այն անձը, որ ստահակ մանկան անվայել ընթացքը տեսնելով փայտն առաւ և նոր մանկածուին [պէղազոգ] ծեծից, այսպէս էլ մանուկներին հասած հարուածներէն ու յանդիմանական խօսքերէն մի իններորդը պատկանում է ուսուցիչներին: Տես, որ այդ հարուածներին չարժանանաւ մէկ օր:

Անձուէր ուսուցիչդ՝

Մեսրոպ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

ՍԵՍՈՒՆՅԻ ԴԵՒԻԹ.

Շուտով կը լրանայ մի քառորդ դար այն օրուանից երբ շնորհիւ յիշատակաց արժանի Գ. Սրբանձտեան վարդապետի մեր գրականութեան մէջ յայտնի եղաւ «Սասունցի Դաւիթ» կամ «Մհերի գուռն» կոչուած մեծ ժողովրդական վէպը: ¹ Մինչև այդ ժամանակ ոչ ոք այդ վէպի մասին գաղափար չունէր, ոչ միայն այդքանն, այլ ոչ ոք չէր իսկ ենթադրում, որ մեր ժողովուրդը կարող է այդպիսի կենդանի վէպեր ունենալ: Դրանից մի քսան տարի առաջ միայն հայ բանասերները գտել էին հայկական հին վէպերի հետքերն Մ. Խորենացու մէջ և կարողացել էին ապացուցանել, որ հայ ազգն ևս միւս քաղաքակիրթ ազգերի պէս իւր պատմական ճակատագիրը ու բարոյական գաղափարները մարմնացրել է վիպասանութիւնների մէջ: Հայ ազգի քաղաքակիրթութեան նշաններէն էին

և նորա հնագոյն վէպական ստեղծագործութիւնները, որոնք սակայն անցեալ փառքին միայն կարող էին ծառայել, մինչ նորագոյն ժամանակի համար մեզ թուում էր թէ՛ հայը կորցրել է իւր հին քաղաքակիրթութեան հետ և բանաստեղծական ձիրքը: Այժմ այդ հերքուած է շնորհիւ հայ ժողովրդական բանաստեղծութեան այն հարստութեան, որ հետ զհետէ լոյս աշխարհ է հանուում:

«Սասունցի Դաւիթ» վէպն հրատարակուելու օրուանից ամէնքի ուշագրութիւնը գրաւեց նա իւր աչքի ընկնող հարուստ բովանդակութեամբ և արտաքին ձևով: Սխալում էր անշուշտ ականաւոր ծրագրողը, երբ կարծում էր, որ այդ գործին չը հաւանողները շատերը պիտի լինին, ոչ եթէ 20 հոգի միայն հաւանեցին և սիրեցին «Սասունցի Դաւիթ» ինչպէս ցանկանում էր գրի առնողն, այլ նա դարձաւ հայ դպրոցական մանուկներից սիրած մինչև ակնարդ գրագէտների սիրելի ընթերցարանը: 1874 թուականից մինչև այսօր «Սասունցի Դաւիթ» երկու ընդարձակ բնագրեր միայն հրատարակուել են ¹ և յայտնուել մի քանի վարկածներ, այսօր մեզ յայտնի է այդ վէպի երեք խմբագրութիւն: Մշոյ, Մոկաց և Սասնոյ, վերջինիս բնագրի ամբողջութիւնը գեռ գրի չէ առնուած, թէպէտ և յայտնի է նրա գոյութիւնը:

Այդ երեք խմբագրութիւններն ևս էապէս միեւնոյն են, վէպի հիմնական գաղափարը և առանձին միջնադէպերը գրեթէ բոլորի մէջ էլ անփոփոխ կան, տարբերութիւնները դիւրութեամբ բացատրւում են բերանացի աւանդութեան գծաւարտութիւններով: Այս վէպի ընդհանուր ուրուագիծն յայտնի է այժմ սակայն միջնագէպերը (episode) թերի են, ուստի և ցանկանալի է ժողովել ամենուրեք վէպիս մնացորդները, որպէս զի վերջնական կերպիւ մի բնագիր կամ գոնէ մի լիակատար ուրուագիծ ունենանք հայ մտքի և երեւակայութեան այդ նշանաւոր ստեղծագործութեան:

¹ Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի գուռն ծրագրից Գ. Վ. Սրբանձտեանց Կ. Պոլսի, ղպ. Ն. Մ. Տնտեսեանի 1874.

¹ Մ. Արեղեան Դաւիթ եւ Մհեր • եւ Գարեգին սարգաւազ Սասնայ ծոբեր:

Ինչպէս երևում է ամբողջ վէպից, սրա աւանդութեան շրջանն է Հայաստանի հարաւային ռազմանագիծը, ցարդ յայտնի վարեանտները Սասունի մերձաւոր հիւսիսային և հարաւային շրջաններիցն են, իսկ այս մեր հրատարակուածը Սասունի արեւելեան աւելի հեռւոր ռազմանիցը, վանիցն է։ «Տղայ Դաւիթը» գրի է առնուած Ս. Լժմիաճնի նորընծայ միտքան հ. Խաչիկ վարդապետի ձեռքով Պարսկահայքում Թագէտո առաքելոյ վանքի շրջակայքում վէպիս պատմողն է վանից գաղթած մի ընտանիքի որդի, ինչպէս այդ երևում է հ. Խաչիկի արձանագրութիւնից։

«Տղայ Դաւիթը» ծագումն արեւելի ուշ է թէ Մշոյ թէ Մոկաց վարեանտներից, սա հազիւ միքանի տեղ միայն պահպանել է վէպի միւս մասերի վերաբերութեամբ ակնարկութիւններ, դրա փոխարէն ընդհանուր հէքիաթների շրջանի միջադէպեր է մտցրել, որ նախնի վէպում չը կար։ «Սասմայ ծռերի» հրատարակչի ձեռքի տակ ունեցած Ա. և Բ. վարեանտներին մօտ է մեր այս նոր խմբագրութիւնը։ «Տղայ Դաւիթը» վիպական զարգացման մի շատ հետաքրքրական շրջանի ծնունդ է, դա ոչ զիւցաղներգութիւն է և ոչ էլ հէքիաթ, այլ մի գիւցաղներգութիւն է, որ հէքիաթի է փոխարկուում ուստի և նրա մէջ մի կողմից տեսնում ենք մեզ յայտնի գիւցաղներգութեան հետքերը և միւս կողմից հէքիաթից տարբեր, որոնք յատուկ են (իբրև հասարակ տեղիք) մեր բոլոր հէքիաթներին։

«Մհերի Դուռն» վիպասանութեան մէջ գեռ սրբող պահպանուած են պատմական հետքեր, մինչ «Տղայ Դաւիթն» այդ փոխարինել է ընդհանուր ձեւերով։ Հէնց վէպի սկսուածքը, որ պոռնկորդի է դարձնում Մարայ Մեղիքին և նրան անարգական Շուն Մեղիք անունն է տալիս, չէ համապատասխանում նախնի վիպասանութեան ոգուն և բովանդակութեան։ Մարայ մեղիքին և Սասմայ ծռերը ազգականներ են, Դաւիթն ու Մարայ Մեղիքը եղբայրներ են, սակայն այլ երկրներ

րի ծնունդ։ Տղայ Դաւիթը մի ամբողջութիւն է կազմում նրա մէջ բացի իսկական հերոսից միւսների մասին խօսք չը կայ, վէպի ամբողջութիւնն տալու համար Դաւիթի կրթութիւնը այնպէս է պատմած, ինչպէս բոլոր հէքիաթներումն է, այս էլ հէքիաթ դարձնելու երկրորդ յաւելուածն է, որ չը կայ նախնի վէպի մէջ։ Մեր հէքիաթներին ծանօթ անձինք գիտեն, որ շատ արքայազունների կրթութիւնն սկսում է մի ապեկապատ սրահում և վերջանում կռիւների դաշտերում։ Սրա շարունակութիւնն է «Ջիրիգ Ի» նկարագիրը, որ դարձեալ յաւելուած է վէպի վրայ։ Մեր բովանդակման համաձայն Գ. Ե. մի մութը յիշողութիւն է նախնի վէպից, որի ձեւը սակայն փոխած է։ Գլուխ Բ. ի մէջ յիշատակուած քեռիներից երկուսը վէպի մէջ մի տեղ Դաւիթի եղբայրներն են, մի այլ տեղ քեռու որդիքը։ Վէպի մէջ Մարայ մեղիքի արշաւանքներին են յիշատակուած տէպի Սասուն, խօլըաշին մեր այս խմբագրութեան մէջ փոխարկուել է փահլուանի պատմական անձինք առ հասարակ մեր այս վարեանտում փահլուան են, որ դարձեալ հէքիաթի յատկութիւն է։

Նախնի պատմութեան բոլոր միջնադէպերը պահպանուած են այստեղ, թէպէտ այլ յօդաւորութեամբ, օր. պառաւի արտի, Մարայ Մեղիք մօր միջամտութիւն, աշուղի, պոզպատի ծառի և լն. վէպի վերջաւորութիւնը բոլորովին համապատասխան է, այդ տեղ արդէն հէքիաթի ձեւով է պատմում ամենայն ինչ և արագ գիմում է վախճանին, նախնի տեղագրական անուններից ոչ մէկն էլ չը կայ յիշուած, այլ Դաւիթի կռիւն է զանազան փահլուանների հետ։

Չարմանալի չէ թուում և ու Նշանի չը յիշատակուելը, որ նախնի վէպի մէջ իմաստ ունի, իսկ այս տեղ ոչ, որովհետեւ կրօնական տարրը բոլորովին դուրս է ձգուած, յիշատակութիւն չը կայ, որ Դաւիթ քրիստոնեայ էր, Մարայ Մեղիքը կապալաշու, Այս և ու հէքիաթի յատկութիւն է։ Ինչպէս վերևումն է

տկնարկեցի, Տղայ Դաւիթը ոչ գիւցաղներ-
գութիւն է և ոչ հէքիաթ, այլ թէ հէքիաթ
և թէ գիւցաղներգութիւն, ուստի և մէկի
տարերբը փոխարինում են միւսին, բայց այդ
փոխանակութիւնը դեռ չէ կատարուել և
վերջացել: Դրանով է բացատրուում և Դաւ-
թի երգման ձևի գեռ ևս պահպանուած
լինելը:

• Տղայ Դաւթի լեզուն ևս մի խառնուրդ
է բարբառների, հիմնական բարբառը դեռ
վասպուրականի է, բայց արդէն նկատելի է
պարսկահայոց բարբառի ազդեցութիւնը,
պարսկական բառերի գործադրութիւնը: Վեր-
ջացնելով մեր հարեանցի գիտողութիւնները,
հայ բանասէրներին ենք առաջարկում հայ-
կական նշանաւոր գիւցաղներգութեան հե-
քիաթ դառնալու փոխանցման շրջանն, որ
գրուած է երկու հայ բարբառներից կազ-
մուած խառն լեզուով:

Ծ. Բ.

Տ Ղ Ա Յ Դ Ա Ւ Թ Ի

ԵՒ

ԱՂԶԻԿ ԽԱՆԳՈՒԹԻ

ՀԷՔԻԱԹԸ.

Ա.

Մօրայ Մհեր թաքեաւէր:

Հատ զօռաւ թաքեաւէր կըլնի.
Ըտոր էրկու կնիկ կըլնի.
Օրերէն մէկ օր կնիկայ տենայ
Պատի կնկան մօտ մէ մարդ մէ քընէ.
Կասի—հայ հայ, ևս Մհեր թաքեաւէր ըլնեմ
Իմ կնիկ էսա բանի տէրն ըլնի.
Հակեար մկայ մէ թափիկ զարկեմ
Էրկուան էլ քեառասուն գեաղ կնիկան գետնի տակ.
Ետիկ իմ անուան լաւ չի.
Վաքիլ վաղիր կասեն թէ պատի կնիկ ինչի էլաւ.
Զըլնի մէյ բան տեսաւ, պատի կնկան զայ արաւ.
Գուրբը հանաւ, թալաւ վրէնբը, ընցաւ գնաց.
Մնաց, կնիկ օյանմիշ էլաւ.
Օյանմիշ էլաւ տեսաւ, որ իրար չեն գալի.
Ասաւ—վայ տանիսն ա փլէ թէ ինչ ա էլէ.
Էգա կնիկ մարդ իրար տուեց.
Դլօխ հանեց տեղից տեսաւ թաքեաւէրի քուրք.
Ասաւ—քեօ տունը չուրի էլ մեղի պրծում չըկայ.

Ասաւ—չէ էլ մի վախի, որ զայ ընէր մեղի մէ թա-
փուկ կը զարկէր.

Հիմայ զայ ընելու չեղեր.

Կինը փոշմեց թողկեց եկաւ.

Թէ էլ էսեց բան չեմ բռնէ.

Սիրողն էլ փախաւ գնաց.

Կնիկը երէխով մնաց.

Բ.

Թաքեաւէրի ճոշ կնիկն էլ երէխով էր.

Մնաց, ժամանակ որ լցուաւ.

Էտա պատիկ կնիկ պառկաւ երէխայ բերեց.

Էկան մուշտուլուղ բերեցին Մհեր թաքեաւէրին.

Թէ—թաքեաւէր քեզիկ մէ տղայ էլաւ.

Էտիկ մուշտուլուղ ցրուեց.

Քեաղաք էր ուրախութեն արեցին.

Զրաղվան արեցին, թէ մեր թաքեաւէրին տղայ
մ էլէ.

Ժողուրտվան վաքիլ վաղիր, թէ—թաքեաւէրն ապ-
րած կենայ.

Բե տենեք տղայի անուն ինչ պոխ գնենք.

Ասաւ—Հուն Մէլիք.

—Թաքեաւէրն ապրած կենայ.

Ասին, Հուն Մէլիք անուն կըլնի.

—Վաղիր, վաքիլ իմ տղէն չէ. Անունն էն ա.

Զունքի թաքեաւէր խորխորդ գիտէր.

Վաքիլ վաղիր չէր գիտէին.

Բերեց վէր ըտոր թէկն գրեց.

Գ.

Տվեց ըտոր ճոշ կնիկն էլ պառկաւ, երէխայ բերեց,
Էլի մուշտուլուղ բերեցին.

Մուշտուլուղ որ բերեցին.

Եօթն օր եօթ գիշեր էտա քաղաք չրաղվան էլաւ.

Մուշտուլուղ ցրուեց.

Ժողուրտվան թէ—թաքեաւէրն ապրած կենայ, ըս-
տոր անուն ինչ գնենք.

Ասաւ—գնացէք երէխն բերէք մէ տենամ.

Բերեցին, տեսաւ երէխի աջ ձեռը խուփ ա.

Բերեց զինքը ձեռք տուեց, ինչ զգար արաւ.

Զըկրցաւ որ երէխի ձեռք բանայ.

Կանչեց ասաւ.—փահլաւաններ թող գան.

Եօթ փահլաւան ունէր.

Եօթն փահլաւաններն էլ էկան.

Մէկ մէկ էտա տղի ձեռք ձխտին որ բանան, չըկրց
բանի.

Ասաւ—էլ ձեռք մի տուէր, տարէք գացէք.

Տարան գնացին երէխէն.

Բերեց էկաւ էն Հուն Մէլիքը.

Ըտոր թէկն գրեց

Թէ—Հուն Մէլիք, Դաւիթ քեօ պատի ախպէր.